

والتحرير

مجلة جمعية القاهرة الخيرية الأزمنية العامة

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅԻՒՆ ԳԱՏՈՒԷՒ Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ

المدير المسئول ا. صاروخان - ١٥ شارع عماد الدين - تليفون ٥٥٦٣٦ - صندوق بريد ٧١٧ القاهرة

Զ . Տ Ա Ր Ի

Թ Ի Ի

1

ՅՈՒՆՈՒԱՐ 1962

համագրական

ՄՇԱԿՈՅԹԻՆ ՀԱՄԱՐ

(«Տեղեկատու»ի ամսօրեայ դառնալուև առիթով)

Քանի փողափական եւ բնկերային հարցերը կը բազմանան ու կը բարդանան, այնքան աւելի զգալի կ'ըլլայ կենսականութիւնը մեակոյթին եւ մեակութային կեանքին, ամենուրեք: Այլեւս բոլոր, արեւելի եւ արեւմուտքի, հիւսիսի եւ հարաւի բոլոր ժողովուրդները կը մտածեն որ միակ կայուն, յաւերժական եւ վերանորոգիչ ազդակը՝ մեակութայինն է:

Տեղագին աշխատանքի լծուած են մատուցողութիւնն ու աշխատանքութիւնը աշխարհի չորս ծագերուն: Իսկ նորագոյն ազգեր, զմայլելի պայծառաստեղծութեամբ մը, նոյնքան յարգ կ'ընծայեն մեակոյթին որքան՝ նիւթական եւ բեմիկ յառաջդիմութեանց: Վասնզի գիտակից են մարդիկ այլեւս որ առանց հոգեկանին, նիւթական հարստութիւնները չեն սասարեւ երջանկութեան կառուցումին: Այս հիմնական համապատասխանութիւն մէջ եւ անոր իբրեւ ներդաստակեալ մէկ մասնիկը, Հ.Բ.Ը. Միութիւնն ալ օրէ օր աւելի ու աւելի կը մխրճուի մեակութային աշխատանքներու մէջ, կրթական եւ մտայն գործերով նուազ մասնագրական եւ մեակութային այլ մարզերէ ներս:

Հ. Բ. Ը. Միութեան 48րդ Անդամական Ընդհ. Ժողովը Նիւ Եորքի մէջ, ինչպէս գրուե-

ցաւ բերքերու մէջ, այս օրջանին արձանագրած է մեակութային յատկանշական նորութիւններ եւ կատարած է բացառիկ յատկացումներ: Կ'արժէ կարգալ ընդհ. Ժողովի ամբողջական ստեղծագործութիւնը համոզուելու համար ի գործ դրուած ճիշդութեան մեծութեան մասին:

Փահիրէի եւ Աղեփանդրիոյ Հայ Բարեգործ Ընդհ. Միութեանց վարիչները, հետեւելով այս շինարար ուղիին, այս տարի աւելի զարկ տուին մեակութային ձեռնարկներու: Ուսանողներու մասին եղան նոր կարգադրութիւններ եւ կանոնաւորութեան զարգացուցիչ դասախօսութիւնները: Մեր հաւաքավայրերը, մանաւանդ երիտասարդական ձեռնարկներու օրերուն, ներկայացան մեր հասարակութեան: Եւ Վարչութիւնները ստեղծուած կ'ըլլան յատկապէս արձանագրութեան վարձել: Ասիկա ապացոյց է որ մեր ժողովուրդը Հ. Բ. Ը. Միութիւնը եւ անոր ձեռնարկները իր սրտին ուելի մօտ կը գտնէ:

Ռապէտի հասարակութեան հետ՝ մեր Միութեան ճեղական մարմինները աւելի տուտ եւ յանախակի շփման մէջ մտնեն ու զիրար յիշեն ամեն օր, նորընտէր Վարչութիւնը որոշեց որ «Տեղեկատու»ն այսուհետեւ հրատարակուի իբրեւ ամսօրեայ հանդէս, փոխան երկամսեայի:

Կը խորհինք որ այսպէսով մենք աւելի մօտ պիտի ըլլանք առօրեայ հայ կեանքին ու դիւրութեամբ պիտի կրնանք արձագանգել հայ ճիշդութեան:

Աւելին, օրոշուեցաւ որ «Տեղեկատու»ի

Ք Ա Ռ Ս Պ Ա Տ Ի Կ Յ Ո Ւ Ե Լ Ե Ա Ն Ն Ե Ր Վ Ի Ե Ն Ն Ա Յ Ի Մ Ի Խ Թ Ա Ր Ե Ա Ն Մ Ա Յ Ր Ա Վ Ա Ն Ք Ի Ն Մ Է Ձ

Ե. Խ. — Մխիթարեան Միարանութիւնը եւ իր Աբբահայրը ազգային-մշակութային մեծ նշանակութիւն ունին մեր ժողովուրդին մէջ: Բացի ասկէ՝ Արճ. Հապոզեան Աբբահայրը երկար տարիներ եղած է Հ. Բ. Ը. Միութեան Վիեննայի Մասնաճիւղին անձնուէր Քարտուղարը: Կրկնակ հասոյթով տեղ կուտանք այս յօդուածին, հոգ չէ թէ քիչ մը ուշ: (Մեր սոյն թիւին տպագրութիւնը ուշացաւ մեզմէ անկախ պատճառներով:)

ԱՌՍՏՐԻԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՇՔԱՆՇԱՆ ԱՐԲԱՀԱՅՐ ՀԱՊՈՉԵԱՆԵՒ, — Ս. ՊԱՊԻՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ, — ԽՕՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ՎԱՐՁԱՊԵՏԸ ՀԱՅ ՎԱՆՔԻՆ ՄԷՁ, — ՁԱՅՆԱՍՓԻՒՌԸ ԵՒ ՀԵՌՈՊԱՏԿԵՐԸ ԿԸ ՀԱՂՈՐԻՆ ԅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԸ:

Հայ, Մխիթարեան Միաբանութիւն, Հապոզեան Աբբահայր. — Այս նրեք անունները շարաթ մը ամբողջ յօդուածներու նիւթ հայթայթեցին Վիեննայի լրագիրներու: 1961 Սեպտ. 5—10 շքեղ հանդէսներով տօնակցան:

- ա) Հ. Մեսրոպ Արք. Հապոզեանի քահանայութեան յիսնամեայ և
- բ) Աբբայութեան երեսնամեայ տարեդարձները:
- գ) Միաբանութեան Վիեննա փոխադրութեան 150 ամեակը և
- դ) «Հանդէս Ամսօրեայ» բանասիրական հանդէսին 75 ամեայ յարելեանը:

Այս հանդէսները մասնաւոր փայլ ստացան անով, որ Աւստրիոյ կրօնական թէ պետական գլուխները մասնակցութիւն բերին անոնց, ապացոյցը տալով Հայ ցեղի հանդէպ իրենց հիացումին և յարգանքին:

Օրուան վարչապետը՝ Տօթթ. Ռաաք, հազիւ իրազեկ տօնակատարութեանց, Մայր վանք կը հաղորդէր Պետութեան որոշումը. Բարձրագոյն շքանշանով պատուելու Հա-

մէջ աւելի սեղ տուի երիտասարդութեան: Պիթի հրահարակուիք երիտասարդական զեկոյցները, սեղեկատուութիւնները, հանդիսներուն ցկարագրականները, իրենց յաջողութիւններուն լուրերը եւ, ինչո՞ւ չէ. նաեւ անոնց գրական-գրեական նախափորձերը:

Վստահ եմք, որ մօակոյթի խորացման եւ տարածման համար զինուորագրուած մեր Միութեան գաղութիս օրկան «Տեղեկատու» ի ամսօրեայ դառնալուն լուրը պիթի ուրախացրե՞ք բոլոր հայերը:

պոզեան Աբբահայրը և Կառավարութեան պաշտօնական մասնակցութիւնը հանդէսներուն:

Սեպտ. 2 ի միջօրէին, Կրթական նախարարութեան դահլիճին մէջ տեղի ունեցաւ շքանշանի տուցութիւնը: Ներկայ էր աւստրարնակ հայ ազգակիցներու խումբ մը, իսկ Վիեննայի Կարտինալը դրկած էր իր փոխանորդը:

Կրթական նախարար Պ. Դրիմելլի, հանդէսի ընթացքին խօսք առնելով, ի միջի այլոց ըսաւ.

«Աւստրիոյ համար երջանիկ օր մըն էր այն օրը, երբ Մխիթարեան Միաբանութիւնը փոխադրուեցաւ հոս, Վիեննա Վիեննա հարուստ է այս Հայ Վանքով այն տեսակէտէն՝ որ արեւմտեան քաղաքակրթութեան կեդրոն ըլլալով, իր մէջ ունեցաւ նոր մըն ալ, արեւելեան մշակոյթի կեդրոն մը: Եւ դուք, Մխիթարեաններդ, արժեցողցիք Ձեր այդ հասգամանքը: Ձեր ազգային մշակոյթէն ոչինչ տուժեցիք, ընդհակառակն, արեւմտեան քաղաքակրթութիւնն իսկ հայացողցիք՝

Ձեր տպարանը, Ձեր ճոխ մատենադարանը, թանկագին ձեռագիրները, աստեք ամէնքը հարստութիւններն են Վիեննայի: Կարելի չէ Վիեննան մտածել առանց Մխիթարեաններու:

«Իսկ դուք, Գերապայծառ Տէր, նոյնացած էք Վիեննայի հետ, քանի Ձեր մտաղաշ մանկութենէն ի վեր, վաթսուներորս տարի ապրած էք հոս, Աւստրիոյ մայրաքաղաքին մէջ: Ձեր մականին տակ Միաբանութիւնը ստացաւ նոր աւելի և կորով: Հանրապետութեան նախագահը գնահատելով ինչպէս Միաբանութեան, նոյնպէս նաեւ Ձեր անձ-

նական բարձր արժանիքները Աւստրիոյ համար, Ձեզի կը շնորհէ Աւստրիոյ ամենէն բարձր շքանշանը՝ Ոսկեայ խաչով: Այս առթիւ, չէք գիտեր թէ որքան հպարտ եմ ես որ ինձ վիճակուած է զայն կախել Ձեր կուրծքէն...»

Ու նախարարը խաչադրոշմ շքանշանը կախեց Գեր. Արքաճօր վիզէն. մինչ ներկաները կը ծափահարէին գոհունակ սրտով:

Գեր. Հապոզեանի շնորհակալութեան ուղերձը խօսքն էր համեստ ու խոնարհ կրօնաւորի, որ ամէն փառք կը վերագրէ Աստուծոյ և իր միաբանակիցներուն: Տըրուած ընդունելութեան ընթացքին եղան բարեմաղթութիւններ:

Յորեկինական հանդէսները մասնաւոր և պատմական փայլ մը ստացան ժամանուածովը Վենետիկի Միսիթարեան միաբանութեան Ընդհ. Արքունայր Սրապիոն Արք. Ուլուկոնճեանի Առաջին անգամն էր որ Վենետիկեան Արքունայր մը կ'այցելէր Վիեննա, միասին բերելով շարք մը ուխտակից եղբայրներ:

Օր առաջ, Պէյրուսթէն ժամանած էին Չմմառու վանքին մեծաւորը, զանազան վայրերէ այլ վարդապետներ: Հոկայ Մայրավանքին բոլոր սենեակները լի էին հիւրերով և ուխտաւորներով:

Յորեկինական տօնախմբութեանց բեւեռն էր գոհաբանական Պատարագը: Վանքին եկեղեցին շատ փոքր պիտի գար հրաւիրեալներու փոքրագոյն կոտորակն անգամ պարփակելու: Ուստի ընտրուած էր Վիեննայի մեծագոյն և փարթամ տաճարներէն մին, ուր նոյն օրը ժողովուրդը ալիքներու խոյանքով եկած էր: Եւրոպայի սրտին վրայ Հայ ծէսը փայլեցաւ իր բոլոր շքեզանքով: Ոսկեհիւս հանդերձանքները պատարագիչ Արքաճօր, ասեղնագործ շապիկներն և ուրարները օտակաւագներուն, ինչքան զմայլանք կորզեցին եւրոպացիներէն: Յորեկինաւոր Հապոզեան Արք. համակ կարմիրներու մէջ, ընդունուեցաւ եկեղեցւոյ աւագ դրան առջեւ և առաջնորդուեցաւ դաս, մինչ վերէն, վանքին երգչախումբը լսելի կ'ընէր Այտընեան Արքաճօր քառաձայն օրքեսթրալ Պատարագը, որ ինքնին գլուխ գործող մըն է: Ու անա կը հասնի Վիեննայի Արքեպիսկոպոսը՝ Կարտինալ Բէռնիկ

և դասին մէջ կը բազմի իր գահին վրայ: Պատարագին ներկայ էին բազմաթիւ եպիսկոպոսներ, վարդապետներ, պետական անձնաւորութիւններ, մտաւորականներ, և այլն: Աւետարանի ընթերցումէն ետքը կը քարոզէ Վիեննայի Օգնական Արք.ը, գովքը հիւսելով Միաբանութեան և անոր արժանաւոր Պետին:

Ձայնասփիւռը և հեռատեսիլը երկուքուկէս ժամ անընդհատ հեռաւորներուն կը հասցնեն հայ մեղեդիներն ու հայկական ծէսին խորախորհուրդ գեղեցկութիւնները:

Պատարագի աւարտումին խօսք կ'առնէ Վիեննայի Կարտինալը, ընդելուզելով մաղթանք և հիացում: Կարտինալը իր քարոզին մէջ կարդաց Յովհ. ԻԳ. Քահանայապետին հեռագիրը: Պապը, այս առիթով Հապոսեան Արքաճօր կուտար Առընթերկայ Ս. Գահուն (Assistant du Trône) բարձրագոյն տիպոսը:

Պատարագն աւարտեցաւ Հապոզեան Արք.ի օրհնութեամբ և մաղթանքներով: Յերեկին տրուեցաւ ճոխ սեղան մը ի պատիւ հրաւիրեալներուն:

Ապտ. 5ը յատկացուած էր Հայ Պաղութին և հայ ուխտաւորներուն: Ժամը 10 ին, վանքի մեծ դահլիճին մէջ տեղի ունեցաւ հանդէս մը, պատշաճ յայտագիրով: Սօս քառնող աշխարհական ազգայիններդը՝ ուստիք շայնեցին Միաբանութեան, իրրեւազգային վերականգնումի սատարող Հայ անուներ պայծառացնող, օտար երկինքներու տակ: Միսիթարեան հայրերէն խօսք առնողները իրենց շնչուր դրին Միաբանութեան ընելիք գործերուն վրայ:

Ինչքան սրտառուչ էր ու առինքնող՝ Գերպ. Հապոզեանի պատասխանը իրեն եղած դրուատիքներուն: Ակնարկելով իրեն տրուած շքանշանին, ան ըսաւ. «Մարդիկ խոշորացոյցով արժանիքներ կը փնտռեն, ու եթէ գտած ըլլալ կը կարծեն՝ մետադի կտորներ կը կախեն անոր կուրծքէն: Մեր ամբողջ արժանիքը կ'ուզենք տեսնել Աստուծոյ և Ազգի ծառայութեան մէջ: Որքան կարենանք տալ մեր սիրելի Հայ Ազգին, այնքան աւելի երջանիկ պիտի համարենք մենք զմեզ: Ու եթէ կարենանք բան մ'աւելցնել անոր մշակոյթին վրայ, բանով մը նպաստել անոր բարգաւաճումին, դարձեալ

ՕՇԱԿԱՆԻ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետի նախագահութեան տակ գործող վանական նորագութեանց ճարտարապետական Յանձնաժողովը, 1960 թուականի իր ծրագրում, նախատեսել էր նաև Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց Եկեղեցու, մեծ Սրբի դամբարանի, տաճարի սալալատակման, ներքին բարեկարգութեան, եկեղեցու հարաւային մայթի սալալատակման և եկեղեցու ամբողջ շրջափակի պարսպապատման աշխատանքները:

Համաձայն այս ծրագրի, անցնող շինարարական տարում պարսպապատուեց Սուրբ Մեսրոպ Մաշտոցի Եկեղեցու հողամասը՝ 310 գծային մետր, Արթիկ տուֆի սրբատաշ քարերով, և ձեւաւորուեց մետաղեայ ճաղերով փողոցի կողմից: Եկեղեցու հարաւային մայթը սալալատակուել է դեղնաւաւուն մաքուր տաշած տուֆ քարերով:

Եկեղեցու ներքում, աւագ սեղանի տակ, գեղեցկօրէն ձեւաւորուել է մեծ Սրբի դամբարանը բազալտ սրբատաշ քարից, սա-

պիտի ըսենք, ծառայք անպիտանք եմք, զոր ինչ պարտէաք առնել՝ արտրաք:» Հայ ազգին ծառայել կը համարենք փա՛ռք և վարձատրութի՛ւնն:

Զանց կ'առնենք յիշատակել միւս բոլոր հոնդէաներու նկարագրութիւնը: Յիշենք հատ մը անոնցմէ.

Աեպտ. 10 ին, երեկոյեան ժամը 5 ին տեղի ունեցաւ թափօր մը Վիեննայի փողոցներուն մէջ, ուր ներկայ էին աւելի քան յիսուն հազար հանդիսականներ: Թափօրին մաս կը կազմէին անհամար աչակերտներ և աչակերտուհիներ, բազմաթիւ մայրապետներ և կրօնաւորներ: Երկու նուագախումբեր կը վարէին թափօրը, հընչեցնելով կրօնական երգեր: Փողոցները դրօշազարդուած էին:

Նոյն երեկոյեան, զոհարանական աղօթքով փակուեցան յոբելինական տօները:

Հիւրերը մեկնեցան և վանքը մտաւ իր առօրեայ հունին մէջ, յանձանձիր նուիրումի փառս մշակոյթին:

Ն. Մ.

լայտակուել է յատակը բազալտ քարով, վերականգնուել է դամբարանը իր նախկին տեսքով, քերելով ձեւիք, և թաղի վրայ կանգնեցուել է նոր, բազալտ սրբատաշ քարից տապանաքար, «Սուրբ Մեսրոպ Մաշտոց, 361-440» տապանագրութեամբ: Մարմարէ հին տապանաքարը, որպէս հնութիւն. մնացել է դամբարանում:

Դամբարան տանող նախասենեակը, իր յատակով և աստիճաններով, վերակառուցուել է սրբատաշ բազալտ քարից: Նոյն այդ նախասենեակում զետեղուել է յուշարձանաքար, որի վրայ գրուած է հայոց Մեսրոպեան երկաթագիր այրուերնր:

1960 թուականի Նոյեմբերի 18ին ուխտաւորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Միլանոյից Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց Եկեղեցու վերանորոգման բարերար Թորգոմ և Հայկ Ղազարոսեան եղբայրները, որոնք Նոյեմբերի 21ին, Երկույարթի օրը, ուխտի գնացին Օշական Ս. Մեսրոպի դամբարանին, տեսան իրենց քրտաբուխ լուծմանելով կատարուած վերանորոգութեան աշխատանքները և հոգեւին ուրախացած, ծնրադրեցին հայ գրերի մեծ Տեսնողի նոր դամբարանի առաջ, բերելով իրենց երախտագիտութեան տուրքը Օշականի մեծ Սրբին:

Նոյեմբերի 24ին, Հինգշաբթի օրը, Վեհարանում, Ղազարոսեան եղբայրների պատուին տրուեց ճաշկերոյթ, որին ներկայ էին Գերագոյն Հոգեւոր Խորհրդի եկեղեցական և աշխարհական անդամները, Հոգեւոր Ճեմարանի վերատեսուչ Գերաշնորհ Տ. Հայկազուն Արքեպիսկոպոս Աբրահամեանը, Մայր Աթոռի ճարտարապետների Յանձնաժողովը, Մայր Աթոռի դիւանապետը, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը և ուրիշներ:

Աեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը: Ընդունելութեան ժամանակ հայ ժողովրդի շինարարական - կառուցողական ընդունակութիւնների մասին խօսեցին Դոկտ. Պրոֆ. Ա. Ղարիբեանը, Դոկտ. Կարօ Ղաֆադարեանը, ճարտարապետներ Մ. Մաղմանեանը, Վ. Յարութիւնեանը, Ղազարոսեան եղբայրների սրտաբուխ նուիրատուութեան նշանակութեան մասին խօսեցին Գերաշնորհ Տ. Սահակ, Տ. Հայկազուն, Տ. Սզնիկ սըր-

Պ Ա Ր Տ Ք Դ Կ Ա Տ Ա Ր Է՛

Honour and shame from no condition rise
Act well your part.

There all the honour lies.

ALEX. POPE

Պարսէղ կասարէ:

Այս երկու բառերը վսեմ դաս մը կը պարունակեն. դաս մը որ անհատին փառքը կ'ապահովէ եւ եւ ընկերութեան բարօրութիւնը:

Այն օրէն իվեր երբ Յաւիթեանականին մասը օարժման մէջ դրաւ բնական ուժերը, անոնց իւրաքանչիւրին սահմանուեցաւ պարսէ մըն ալ, ու անա կը տեսնենք որ անոնք կ'ընթացան անվրէպ պարսէբրու օաւդին վրայ, ու կը կազմեն ձեռքերական գործունէութիւնը, այսինքն կեանքը:

Խոն պիտի լինէր կեանքը եթէ բնական ոյժերէն մին կամ միւսը թերանար իր պարսէի կասարման մէջ. ի՞նչ պիտի լինէր եթէ օոգին չի հանէր այլեւս վեր բարձրացաւու, կամ եթէ ամպերը զլանային իրենց ցողը: Խոն պիտի ընէինք եթէ լուսոյ օտաւիդները չը մաքառէին խաւարի իջնանու-

րեան դէմ, կամ եթէ երկրագունդը դժկամակէր հնազանգելու իր հրեղէն վեհապետին:

Պարսէն է որ կ'ուղղէ, կը մղէ նիւթեղէն տարրն ու անոր ամէն մէկ հիւլէն. անո՛վ է որ կը օղտողան աս-ղերը երկնից մէջ ու կը սուրան հովերը երկրիս վերեւ, անո՛վ է որ կը փթթի ծաղկալից գարունը ու կը փայլի ցնորհափայլ արեալոյսը: Ու այն սկզբունքը որ կեանքն է նիւթական աշխարհին՝ բարոյականին մէջ լծակ մըն է ամենագօր, որուն առջեւ թաւալական կը գլորին վիթխարի զանգուածները թուառութեան, զգիտութեան եւ անօրհնութեան: Իւրացնել այդ սկզբունքը, յիւրանալ այդ լծակին. այս պէտք է լինի դաստիարակութեան վախճանը: Կանուխ ասակ սորվեցնել որ, եթէ մարդկային ոգին յառաջդիմութիւն կը պահանջէ՝ բարոյական գերազանցութիւնն է յառաջդիմութեան չեղանակ գործ ծաղիկը, իսկ պարսէի կասարումն է բարոյական գերազանցութեան փորձաօրջանը: Պարսանանաչութիւն. այս ձայնը թող հնչէ ամէն արտի մէջ. մեր բաղձանքները ու հակումները թող լռեն անոր առջեւ, հանոյ-փի սերը, ոսկիի սեղը եւ համբաւի հրայր-քը թող հետեւին անոր. վերջապէս այն թող լինի կեանքի առաջնորդն ու նպատակը:

I slept and dreamed, that life was heaty
I woke and found that life was duty. այսինքն,

բազանները, գիւտանապետ Հայկ Առաքել-եանը, խմբագիր Արթուր Հատիտեանը:

Բարերար Պր. Թորգոմ Ղազարոսեանը, խորապէս յուզուած այս ջերմ արտայայտութիւններին, խօսք առնելով նախ իր և եղբոր երախտագիտութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք ուխտի գալու սրտագին հրաւերի համար, ապա ասաց, որ իրենք մեծահարուստներ չեն, բայց իրենց սրտի պարտքն են համարում՝ իրենց կարողութեան չափով օգնել Վեհափառ Հայրապետին շինարարական ձեռնարկներին և Մայր Հայրենիքի շինարարութեան, և որ իրենք սիրով ստանձնել են Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց Եկեղեցու վերանորոգութիւնը՝ որպէս երախտագիտական տուրք հայ գրերի մեծ գիւտարարի խնկելի յիշատակին և անմահ գործին:

Հնդուեցութեան վերջում խօսք առաւ

Վեհափառ Հայրապետը. ամփոփ գծերի մէջ և սրտածմլիկ պատկերներով ներկայացրեց երզնկացի Ղազարոսեան երկու եղբայրների կեանքը, որոնք 1915 թուականի տարագրութեան ճանապարհի վրայ կորցրել էին իրենց նահապետական ընտանիքի բոլոր անդամներին, և հրաջքով ազատուած երկու եղբայրները հաստատուել էին Միլանոյում, որտեղ իրենց աշխատասիրութեամբ ստեղծել էին իրենց համար նիւթական ապահով կեանք:

Իր խօսքի վերջաւորութեան, Վեհափառ Հայրապետը Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց Եկեղեցու համեստ բարերարներին կրծքերը զարգարեց Ս. Գրիգոր Լուսաւորչի աղամանգտկու առաջին կարգի շքանշանով, բոլոր ներկաների ծափերի տակ և Ղազարոսեան եղբայրների երախտագիտական արջուէքների մէջ:

«Էջմիւսի»

«Քննցայ, ու երազիս մէջ անուշ բան մըն էր կեանքը»

Արթնցայ, ու հասկցայ որ միայն պարտք մըն էր կեանքը» :

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ

ԿԵԱՆՔԻՆ

Ամերիկա. —

1961 տարեգրանի առաջին վեցամսեային, Հ.Բ.Ը. Միութեան ընդհանուր գործունեութեանց եւ կեդր. Վարչ. Ժողովի սեփականութեանց պատկերը իր գլխաւոր գիծերուն մէջ կը ներկայանայ հետեւեալ կերպով.

Ա. — Կտակներ եւ նուիրատուութիւններ

Կեդր. Վարչութիւնը խոր երախտագիտութեամբ կ'արձանագրէ ստորեւ յիշուած կտակներն ու նուիրատուութիւնները, որոնց գումարները գտնուած են անցեալ վեց ամիսներու անթացքին:

Այսպէս սահմանած է կեանքը մի իմաստակր բանաստեղծ: Բայց ես կը նախընտրեմ միաբանիլ անոնց հետ, որոնք կը հաւատան թէ կեանքը ոչ միայն պարտք մըն է, այլ եւ անուշ բան մը: Պարտք կասարե դուն ալ, ու պիտի տեսնես որ ոյժ մըն ես աշխարհի մէջ եւ բարիք մը ընկերութեան համար, ու պիտի զգաս թէ արդարեւ անուշ է կեանքը: Եթէ կ'ուզես բարին գործել կամ կ'ըզնաս հռչակ հանել, եթէ կը փափաքիս դիւցազն կոչուիլ կամ կը ցանկաս մեծ լինել, մի վազեր քայլամուտ որ դեպի անձանօք ասպարեզներ. նեմարիս բարեգործութիւնն ու լաւագոյն հռչակը, օգտակար դիւցազնութիւնն ու իրական մեծութիւնը, պարտքիդ կատարման մէջ փնտռէ: Նաւաստինոր փոքորակոծ նաւուն ղեկը շի թուր ցլահ, հրեօքը որ լափլիզող բոցին մէջէն կը խոյանայ դեպի վսանգը, գորականն որ հրացայտ ռումբին ներքեւ կը փաթարուի դրօսակին, բծիւն որ մահաւունը համահարակին մէջ կը սլանայ տունէ տուն՝ օրինակելի տպագրութեան, որոնք պարտքի կատարման մէջ կը փայլեցնեն բարութիւնն ու հրոչակը, դիւցազնութիւնն ու մեծութիւնը:

Թողունք անհասական անունները, որոնք դարաւոր սխալացման առարկայ եղած են ու պիտի ըլլան: Ազգերու կեանքն իսկ պերնախօս վկայ է այն գեղազանց ազդեցութեան որ պարտքի գիտակցութիւնը գործած է եւ կը գործէ: Ուր որ հզօր է այդ գիտակցութիւնը՝ հոն գեղածիծաղ կը ժպտի բախտը: Անցեալին մէջ Հոնոլ ջախջախեց իր ոսոխները ցորչափ իր զաւակները հաւատարիմ մնացին իրենց պարտքին:

Անա կենսական դաս մը հայութեան համար:

Ազգին վիճակը բարելաւելու եւ զարգացումը փութացնելու ի՞նչ միջոց կայ աւելի ապահով, ի՞նչ ոյժ կայ աւելի ազդեցիկ: Պարտանանաչութիւնն ամեն հայու նեմաբան թող ընտրուի, ազգային ամեն յարկի եւ ամեն հիմնադրութեան մէջ թիրոջ ոգին, ու ամեն զասակարգի պատճենայէ պահանջուած առաջին պայմանն այն թող լինի, ու հա-

տասանք որ այն ասեմ միայն պիտի յաջողի մէր նպատակին մէջ: Կրթական ու բարեգործական հաստատութիւնները պիտի ծաղկին, եկեղեցական եւ վանական կալուածները պիտի արդիւնաւորին, կրօնաւորը պիտի յարգէ իր կոյման սրբութիւնը, դաստիարակը պիտի ըմբռնէ իր պատճենին վստիւտութիւնը, վարչական մեքենան պիտի գործէ անխափան, մեկ խօսքով պիտի բացուի նեմարիս յառաջդիմութեան դարագլուխ մը:

Երազի աշխարհ մը չէ ինչ որ կը պատկերացնենք, սիրելի ընթերցող, այլ օգտակար իրականութիւն մը, եթէ միայն պարտք կատարես: Պարտք կասարե ուրեմն ով որ ալ ես, ինչ որ ալ ես, եւ մի մոռնար ամենեւին Ալեքսանդր Փոփի խօսքը, զոր բնաբան դրած եմ յօդուածիս եւ զոր այսպէս կրնամ բացատրել.

Կացուցիւնդ կամ դիրքդ չունի ամօթ կամ պատիւ. Լաւ կատարէ քու դերդ, հող է ամէն փառք պատիւ:

ՎԱՀԱՆ ԲԻԻՐԲՃԵԱՆ

Լուսաբեր, 1963

Տոլար

1. Հանգուցեալ Տիգրան (Տիգ) Սարաֆեանի կսակեց, Երեւան, Իլլ. 25,117.66
 Հ.Բ.Ը. Միութեան ջերմ հաւատարմութեան շնորհիւ այս պատուական բարերարին բողձանքին համաձայն, սոյն գումարը պիտի գործածուի մեր դպրոցական ձեռնարկներուն համար:

2. Հանգ. Յակոբ Թովալեանի կսակեց, Տրեզնո, ԳալիՅ. 17,044.48
 Ըստ կտակին տրամադրութեան, այս գումարը անձեռնմխելի պիտի պահուի և անոր եկամուտին 3/4 ը պիտի տրամադրուի Տիգրանակերտի Վերաշինաց Միութեան, Տրեզնո, և 1/4 ով ալ սեւման թոշակ պիտի տրուի Տիգրանակերտցի կարօտ աշակերտներուն:

3. Հանգ. Ալեքսանդր Ասատուրեանի կսակեց, Սեմ Լուիս, Միս. 9,046.55
 Ազնիւ Բարերարը Հ. Բ. Ը. Միութիւնը ազատ թողած է՝ այս գումարը իր ընդհանուր նպատակներուն համար:

4. Բարեբար Տոբ. Վարդգ. Մկրտչեանի 4,000.00
 Յաւելում իր մեծագումար կրթական հիմնադրամին:

5. Հանգ. Եղեկիկի Հ. Սեֆերեանի թողոցեցի, Թոլիսո, Օնայո 2,628.51
 Իր Տիկնոջ յիշատակին՝ կըրթական նպատակի մը համար:

6. Տիար Ա. Մանուկեանի 1,000.00
 Միութեանս նախագահը այս նուիրատուութիւնը ըրած է ի նպատակ Բարեգործականի Հայ Երիտ. Ընկերակցութեան, անոր երեսնամեակին առթիւ հրատարակուելիք հատորին ծախքին համար:

7. Ողբ. Տիկ. Շաֆե Սարեանի յիշատակին ի յարգանս՝ փոխան ծաղկեպսակի ստացուած նուիրատուութեանց գումարը 989.00
 Իր վշտահար ամուսինին՝ Ամբրիկայի Կեդր. Յանձնաժողովի Վարիչ-Տնօրէն Տիար Ռ. Սարեանի բողձանքով՝ այս գումարը բարգոծեցաւ կորօտ Մտաւորականներու Հիմնադրամին վրայ:

8. Հանգ. Միհրան Փեթրիալեանեանի թողոցեցի, Փրցպուրկ, Բեհս. 600.00
 Միութեան ընդհանուր նպատակներուն համար:

9. Հանգ. Կարապետ Տ. Եղիսեանի թողոցեցի, Բեհսաս Սիթի. Միս. 500.00
 Գումար՝ 60,927.20

Ք. Վարչական Տնօրինութիւններ

1. Կեդր. Վարչութեան Դիւանին Կազմը. — Տարեակիցքին՝ զաղտնի քուէարկութեամբ Դիւանի նախկին անդամները բոլորն ալ վերահաստատուեցան իրենց պաշտօններուն մէջ՝ հետեւեալ կերպով.

Տիար Ա. Մանուկեան՝ Նախագահ, Տարք Ե.Յ. Թուրուքեան, Հ. Գալուքեան և Ե. Կիւլպէնկեան՝ Փոխ-Նախագահներ, Տիար Չ. Գարակէօզեան՝ Գանձապահ, Տիկ. Մ. Յովսէփեան՝ Ատենադպիր, Տիար Տ. Սմարեան՝ Փոխ-Գանձապահ, Տիար Ռ. Տօրեան՝ Փոխ-Ատենադպիր:

2. Նոր Անդամ Կեդր. Վարչութեան. — Կեդր. Վարչութեան կազմին մէջ պակաս անդամի մը տեղ, յայտնի Ֆինանսագէտ և Չէյս Մէնէջթըն Պէնքի ընդհանուր քննիչ Տիար Չարլզ Աճէմեան Կեդր. Վարչութեան անդամ անուանուեցաւ: Այս անուանումը պիտի ենթարկուի յառաջիկայ Ընդհանուր Ժողովի նկատառութեան և վաւերացման:

Գ. Կրթական բացառիկ յատկացումներ

1. — Դպրոցական Շէնքի Կառուցում Ամմանի մէջ. — Երուսաղէմի Ամեն. Պատրիարք Հայրը Կեդր. Վարչութեան լուրջ ուշադրութեան յանձնած էր Ամմանի հայ զաղութիւն մէջ, ուր 5,000է աւելի ազգայիններ կ'ապրին, կանոնաւոր դպրոց մը ունենալու անհրաժեշտութիւնը: Պատրիարքարանը նախապատրաստական աշխատանքները կատարած է արդէն և շէնքին կառուցումը կը սկսի մօտ ատենէն: Դպրոցը պիտի կոչուի Վանիամ Իգլայաշեան Վարժարան:

Աւելորդ չենք նկատեր յիշել նաեւ թէ երկար ժամանակէ ի վեր Հ. Բ. Ը. Միութիւնը տարեկան 2,200 տոլարի նպատակ

կուտայ Յորդանանի Հեթումեան Վարժարանին և Զարքայի Ծաղկոցին:

2. Գլորոցական շէնքի կառուցում Գանիրի մէջ. — Գահիրէի Ազգ. Իշխանութեան ջերմ բաղձանքին գոհացում աւել. Կեդր. Վարչութիւնը որոշեց Գ. Մէօթէմէտեան Կտակի կուտակուած պատրաստ գումարը, 18.000 տոլար, արամադրել Եռւպրա թաղամասին մէջ մանկապարտէզի շէնքի մը կառուցման: Եէնքին ճակատը պիտի արձանագրուի՝ Գ. Մեօթէմէտեան Ազգային Մանկապարտէզ, Կտակակատար՝ Հ. Բ. Ը. Միուրիան:

3. — Նպաստ երուսաղէմի Թարգմանցաց Վարժարանին. — Դպրոցին Տեսչութեան ստիպողական խնդրանքին ի պատասխան, Կեդր. Վարչութիւնը 2.000 տոլարի մասնաւոր յատկացում մը ըրաւ՝ Հաստատութեան Երկրորդական բաժինը փակուելու վտանգէն փրկելու համար:

4. — Օգնութիւն Պոլսոյ Ս. Խաչ Դպրեւանքին. — Այս կարեւոր հաստատութեան մէջ կ'ուսանին 155ի չափ սաներ, որոնք կը պատրաստուին եկեղեցական կամ ուսուցչական ասպարէզի համար: Անոնց մեծ մասը բերուած են ներքին գաւառներէն: Ամեն. Պատրիարք Հօր ղիմուծին վրայ՝ Կեդր. Վարչութիւնը 3.000 տոլարի գումար մը փութացուց այս հաստատութեան:

5. Օգնութիւն Կեսիկ Փաշայի Հայ Աւետ. Վարժարանին. — Այս դպրոցին մէջ կ'ուսանին 49 հայ մանուկներ, որոնց եւս մեծ մասը հաւաքուած է ներքին գաւառներէն: Կեդր. Վարչութիւնը դպրոցին նիւթական կացութիւնը թեթեւեղելու համար անոր յատկացուց 1,000 տոլար:

Գ. Ամավարկերու վաւերացում

1. Ամավարկ Եւրոպայի Կեդր. Յանճնաժողովի. — Ներկայ տարեշրջանին սկիզբը, Կեդր. Վարչ. Ժողովը վաւերացուց Եւրոպայի Կեդր. Յանճնաժողովի 1961 տարեշրջանի ամավարկը, որուն ծախքերուն ընդհանուր գումարը կը յանգի 28,000 տոլարի: Կեդր. Յանճնաժողովին տեղական եկամուտն է 7,800 տոլար և ամավարկին մնացեալ 20,300 տոլարը պիտի հայթայթէ

«Նայլ Հոյ»ի մէջ



Վերապատուելի ՎԱՀԱՆ ԹՈՒԹԻԿԵԱՆ կը խօսի իր շատ գեղեցիկ բանախօսութիւնը որ կը խանդավառէ իր ունկնդիրները:

Կեդրոնը՝ մեծ մասամբ յատուկ հիմնադրումներու եկամուտէն:


Կեդր. Յանճնաժողովին դիւաւոր ծախքերը կը կատարուին Մարկոսեան Սաներու կրթաթոշակին, հայերէնի դասընթացքներ ունեցող դպրոցներու, Նուպարեան Մատենադարանին և Դպրոցաէր Տիկնանց և Մուրատեան վարժարաններու մէջ Միութեան պահած սան սանուհիներուն համար:

2. Ամավարկ Մեյզոնեան Կրթ. Հաստատութեան. — Հաստատութեան 1961.62 կրթական տարեշրջանի ամավարկն է 39.736 կիպր. ոսկի, կամ 111,390 տոլար, որուն 9,100 ոսկին, կամ 25,480 տոլարը պիտի հոգացուի տեղական հասոյթներէ և մնացեալ 30,636 ոսկին, կամ 85,910 տոլարը, Կեդր. Վարչութիւնը պիտի հայթայթէ Մեյզոնեան Հիմնադրամի եկամուտներէն:

Հաստատութիւնը յառաջիկայ տարեշրջանին պիտի ունենայ 270 սան և սանուհիներ:

«Միութիւն»


Բարեգործականի շփեղ հասնդեսեն յիշասականեր



Գահիրէի Հ.Բ.Ը. Միուլթեան Երիտասարդացի պատուարբեր անդամներէն Պերճ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ կը կարդայ նախագահական պատգամը:



Պր. ՎԱՐԴԳԷՍ ԳԱՐՏԱՇԵԱՆ կը կարդայ Բարեգործականի նիւթական գործունէութեան մասին իր շահեկան ճառը:



Գահիրէի Հ.Բ.Ը. Միուլթեան Ատենապետ Տիար Հ. Բիւրքճեան Յորելինական Շքանշանով կը պատուէ Վեթերանուհի Տիկին ԵԱԳՈՒՊԵԱՆԸ:



ԱՌԱՋԵՈՐԳ ՍՐԱՋԱՆ ՀԱՅՐԸ և Ատենապետ Տիար Հ. ԲԻՒՐՔՃԵԱՆ

Բարեգործականի Կեանքին (տար.)

Նիւ Եորք.—

Տիկնանց կեդր. Յանձնախումբի աշնան շրջանի գրական առաջին երեկոյթը տեղի ունեցաւ Հոկտ. 20 ի գիշերը. «Իիվըրբայտ Ձըրչի էսէմպլի Օտիթորիում» ի մէջ, ընտրեալ բազմութեան մը ներկայութեան: Հանդէսը կազմակերպուած էր Հայ Մշակոյթի Ամսուան առթիւ և, նոյն ատեն, մեծարելու Տոքթ. Սիրարփի Տէր Ներսէսեանը, առ ի գնահատութիւն հայագիտութեան մատուցած իր ծառայութեանց: Օրուան բանախօս Տոքթ. Աւետիս Սանճեան հարազատօրէն տալէ ետք Հայ Մշակոյթի գարգացման պատմութիւնը, ծանրացաւ Տոքթ. Ներսէսեանի հայագիտութեան բերած նպաստին, յատկապէս մանրանկարչութեան և հայ բիւզանդական մշակութային յարաբերութեանց վրայ: Տոքթ. Սիրարփի Տէր Ներսէսեան, իր կարգին շնորհակալութիւն յայտնեց սոյն երեկոն կազմակերպող Տիկնանց կրթական ծիւղին և բանախօս Պր. Սանճեանին, չեչտեց արժէքը Հայ Մշակոյթին և մասնաւոր հայ կեանքին մէջ անոր կատարած փրկարար դերին: «Կոմիտաս Երգչախումբ» ի տղոցմէ խումբ մը, դաշնակի ընկերակցութեամբ Օր. Յլորենս Աւագեանի, քանի մը երգեր հրամցուց ներկաներուն, որոնք ապա, հիւրասիրութեան կտրկանդակներով և զովացուցիչներով:

Փրաւիսեմս.— Փրաւիտենսի Տիկնանց Օժանդակի ժողովը տեղի ունեցաւ Հոկտ. 10 ին, Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ: Ատենապետուհին Տիկ. Զուարթ Ղազարոսեան բացաւ ժողովը Տէրունական աղօթքով և կարդաց երջանկայիշատակ Գարեգին Պատրիարք Սաչատուրեանի Բարեգործականի ուղղած գեղեցիկ Կոնդակը և բարեգալուստի խօսքերով ողջունեց Տիկիններ Վեհանոյ Մուրատեանը, Վիքթորիա Ասատուրեանը և Զարուհի Արզուեանը, որոնք նոր վերադարձեր էին Եւրոպա և Միջին-Արեւելք իրենց ըրած ճամբորդութենէն: Տիկին Վ. Մուրատեան խօսեցաւ իր պտոյտի մասին, հետաքրքրական տեղեկութիւններ տուաւ իր այցելած

քաղաքներէն, ինչպէս Պէյրութ, Հալէպ, Դամասկոս, Պոլիս, Երուսաղէմ, և մասնաւորապէս ծանրացաւ Հալէպի Բարեգործականի կենսունակ և եռանդուն գործունէութեան մասին, մաղթելով որ անոնց օրինակին հետեւինք՝ անդամագրելով մանուկները: Այս առթիւ, անդամագրեց իր երկու աղջիկները Տիկին Սազմիկ Գասպարեանը և Օր. Սօնան: Օրուան գլխաւոր բանախօսն էր Պր. Յակոբ Ադամեան, որ խօսեցաւ Ս. Մեսրոպի կեանքի մասին՝ պանծացնելով Սուրբին յաւերժական գործը: Հիւրասիրութեամբ վերջացաւ այս հանդէսադասախօսութիւնը:

Զրի Դասընթացներ Հ.Բ.Ը.Միութեան Ուս. բըրթաւուցի կեդրոնին մէջ.—

Հայ գրականութեան, պատմութեան, լեզուի, ճարտարապետութեան և այլ նիւթերու վերաբերեալ աշնանային դասընթացներ տեղի ունեցան Միութեանս Նիւ Ինկլէնտի կեդրոնին մէջ: Իւրաքանչիւր նիւթի մասին որոշուած էր 10 դասախօթիւն, որոնք բոլորովին ձրի կատարուած են: Այս դասընթացներէն զատ կազմակերպուած են երկլեզուեան հրապարակային ասուլիսներ, ամէն Կիրակի երեկոյ միեւնոյն հաւաքավայրին մէջ:

Լուս Աճեկըսէն Տիար Վահան Պետրոսեան վերջերս 10,000 տալար յանձնեց Կեդրոնական Վարչութեան, որպէսզի անոր տարեկան եկամուտը դպրոցի մը ծախքերուն յատկացուի: Որոշուեցաւ այս հիմնադրամին արդիւնքը միացնել այն կարեւոր նըպաստին, զոր Միութիւնը կուտայ Սուրիոյ մէջ «Բարատուրան» գիւղի դպրոցին և այդ դպրոցը կոչել ազնիւ նուիրատուին անունով: Տիար Վահան Պետրոսեան ծնած է Սեբաստիա, Ամերիկա գաղթած է 1913ին: Հիմնադիրներէն է Սեբաստիոյ Վերաշինաց Միութեան:

Յրամսա.— Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի Մասնաճիւղին Օժանդակ Տիկնանց Մասնախումբը այս տարի եւս կազմակերպած էր բարենպաստակ վաճառք մը, որ տեղի ունեցաւ Միութեան Փարիզի գրասենեակի ու-

ՎԱՀԱՆ Մ. ՔԻՒՐՔՃԵԱՆԻ ՄԱՀՆ ՈՒ ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Հ. Բ. Ը. Միուլթեան բազմավաստակ գործիչ, Ամերիկայի Շրջանակի հիմնադիր, կրթական և գրական այլաբարդ մշակ՝ Վահան Մ. Քիւրքճեան իր աչքերը յաւիտենապէս փակեց 1961 Հոկտեմբեր 30ին, Երկուշաբթի երեկոյեան, իր բնակարանին մէջ, Նիւ Եորք, 98 տարեկանին:

Յաջորդ օրը, սեւ լուրը հեռագրուեցաւ Միուլթեան արտասահմանի և Ամերիկայի կեդրոններուն, — Փարիզ, Գահիրէ, Պէյրութ, Հալէպ, Կիպրոս, Պոսթըն և Ֆրեզնօ: Ամերիկահայ թերթեր հաղորդեցին Քիւրքճեանի մահուան գոյժը, հրատարակելով անոր նկարը: Նոյնպէս, «Նիւ Եորք Թայմզ» իր Նոյեմբեր 1ի թիւով համառօտ

րահին մէջ, Դեկտեմբեր 2էն մինչեւ 10:

Յուշադրուած էին զանազան առարկաներ — զգեստեղէն, զարդեղէն, պուպրիկներ, խաղալիքներ, երգապնակներ, բառիօ, պահածոններ եւայլն: Այս տարի կազմակերպուած էր նաեւ հայկական անկիւն մը, ուր դրուած էին զանազան հայ հեղինակներու գիրքերը, ինչպէս նաեւ բազմաթիւ արուեստագէտներու գործեր: Վաճառքի բացումը կատարուեցաւ Դեկտ. 2ին, նախագահութեամբ Տիար Արմենակ Համբարձումեանի, Միուլթեան Վարչական անդամանդամուհիներու, և համակիր հայրենակիցներու: Տիկնանց Մասնախումբի անդամուհիները ջանք չէին խնայած վաճառքը հաճելի և գրաւիչ դարձնելու համար և սկիզբէն մինչեւ վերջ անխոնջ կերպով սպասարկեցին այցելուներուն, որոնք հետաքրքրուեցան ցուցադրուած առարկաներով և գնումներ կատարեցին: Վաճառքի փակումը կատարեց Դեկտ. 10ին Եւրոպայի կեդր. Յանձնաժողովի Ատենապետ Տիար Նուբահան Ֆրէնկեան: Այս առթիւ ներկաները հիւրասիրուեցան շամբանեայով և աղանդներուով:

Մարտի 11. — Հ.Բ.Ը. Միուլթեան Մարտի 11ի Մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը տեղի սենեցաւ Նոյ. 4ին Եւրոպայի կեդր. Յանձնաժողովի Փոխ - Ատենապետ

կերպով անդրադարձաւ անոր կեանքին ու գործին:

Մարմինը հանգչեցաւ Ժամադործեանի մեռելատան մէջ, ուր Նոյեմբեր 2ի երեկոյեան մասնաւոր արարողութիւն կատարուեցաւ իր սիրելիներուն և բարեկամներուն ներկայութեան:

Թաղմանական արարողութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, Նոյեմբեր 3ին, կէսօրէ ետք ժամը 2ին, Նիւ Եորքի Ս. Խաչ Հայր. Եկեղեցիին մէջ, ուր փութացած էին Նիւ Եորքի ազգային - եկեղեցական առաջնորդող ղէմքեր, զանազան կազմակերպութեանց ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ դուրսի քաղաքներէն եկած ազգակիցներ: Արարողութեանց նախագահեց Ամերիկահայոց Առաջնորդ Գեր. Տ. Սիոն Արքեպիսկոպոս, իր շուրջն ունենալով Հոգչ. Տ. Եղիշէ Մ. Վրդ. Սիմոնեանը, Տ. Հմայեակ

Տօքթ. Ա. Պիւլիւքեանի ներկայութեան և ընտրեց նոր վարչութիւն մը, ատենապետութեամբ Տիար Վահագն Սահաթեանի: Տեսնեմք. — Հ.Բ.Ը. Միուլթեան Տեսնիի (Իզէր) մածնաճիւղը իր անդամական ընդհանուր ժողովը գումարեց Հոկտ. 13ին, ներկայութեամբ Եւրոպայի կեդր. Յանձնաժողովի ատենապետի Տիար Գրիգոր Պահրիի և ընտրեց նոր Վարչութիւն մը, նախագահութեամբ Արթ. Տէր Վարապ Բնյ. Աւագեանի:

Լիբանան. — Հ.Բ.Ը. Միուլթեան Մերձաւոր Արեւելքի դպրոցական ցանցին մէջ կարեւոր տեղ կը զբաւէ Դարուհի Յակոբեան աղջկանց վարժարանը, Պէյրութ: Սոյն վարժարանը ցարդ կը մտար վարձու հին շէնքի մը մէջ Պէյրութի կեդրոնը: 1961ին շինուեցաւ վարժարանին նոր շէնքը 5500 քառ. մեթր տարածութեան մը վրայ, երեք յարկով, ընդարձակ մարզավայրով և արդիական բոլոր յարմարութիւններով: Նորաշէն վարժարանը կրնայ ընդունել 300-350 սանուհիներ: Գետնայարկին վրայ կը գտնուին ճաշարանը, մարզական սրահը, կարուձեւի սենեակը, գիտական աշխատանոցներ: Վերին երկու յարկերը յատկացուած են դասարաններու, ուսուցչարան տեսչարանի և: Երկու թեան ծախքը, գետնին հետ արժած է մօտ 100,000 տալար:

ՅԱՐԳԱՆՔ ՎԱՀԱՆ Մ. ՔԻՒՐՔՃԵԱՆԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ

Հ. Բ. Ը. Միութեան կեդրոնական վարչութիւնը իր վերջին նիստին մէջ զգացուած յարգանքով խոնարհեցաւ Վահան Մ. Քիւրքճեանի թարմ յիշատակին առջեւ:

Եթէ բնական օրէնքի կարգին էր ալեփառ ձերուներին մահը, մէկ դարու վրայ կամարուող լեցուն և օգտակար կեանքէ մը վերջ, բարոյական օրէնքի պարտադրանք է, միւս կողմէն, իր անտեսանելի ներկայութիւնը միշտ զգալ և գնահատել այն միջավայրին մէջ ուր ան տքնաջան գործեց, ամբողջական նուիրումով մը փարած իր իտէալին ու կոչումին:

Այդ միջավայրը Բարեգործականի ընդարձակ դաշտն է և իր կոչումը եղաւ որպէս հաւատարիմ մշակ դայն հերկել, սերմանել, ոռոգել և, մինչև իր վերջին շունչը, հրճուել ու խայտալ անոր տուած հետզհետէ աւելի առատ բերքերով:

Ազգային ծառայութեան տիպար գործիչ մը եղաւ Վահան Մ. Քիւրքճեան, որուն կորուստին մեզի պատճառած խոր վիշտը իր արիփանքը կը գտնէ այն մտածումին մէջ, թէ իր յիշատակը անմոռաց պիտի մնայ և իր անձնուիրութեան ոգին ներշնչումի ազբիւր մը պիտի ըլլայ բոլոր անոնց համար, որոնք մեր հանրային կեանքին սպասուորելու կոչուած են:

Հանգիստ ձերունազարդ նահապետին աճիւնին:

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Նախագահ

Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ 48Դ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

Հ.Բ.Ը. Միութիւնը 1960ին մօտ 600,000, տղար ծախսած է Ազգայնականացման գործին համար

Հ.Բ.Ը. Միութեան 48րդ Ընդհ. Ժողովը գումարուեցաւ 2 Դեկտեմբեր 1961 ին, Հոթէլ Ռուզվելթի մէջ, Նիւ Եորք, ուր ներկայ էին 106 իրաւասու անդամներ և պատգամաւորներ՝ Ամերիկայի զանազան քաղաքներէն և Գանատայէն: Նոյնպէս հիւրաբար ժողովին մասնակցեցան Միութեան Լիբանանի Երջ. Յանձնաժողովի Փոխ-Ատենապետ Տօքթ. Անդրանիկ Մանուկեան և տիկինը, Եւրոպայի կեդր. Յանձնաժողովի անդամներէն՝ Փոխ-Ատենապետ Տօքթ. Արամ Պիւլիւքեան, Պր. Հայկ Թօփաքեան և Բարեբար Պր. Երուանդ Հիւսիսեան, որ միանգամայն Ատենապետն է Միլանի Մասնաժողովին:

Հոգչ. Տ. Միւռոն Մ. Վարդապետի աղօթքէն ետք, Ընդհ. Ժողովի Ատենապետ և Հ.Բ.Ը. Միութեան Նախագահ Պր. Ա. Մանուկեան ժողովը բացուած յայտարարեց՝ Բարեբարներու յիշատակին նուիրուած յարգանքի իր խօսքէն յետոյ, ան կարգաց անունները ներկայ 1961 ի ընթացքին մահացած այն անձրուան, որոնք Միութեան շարքերուն մէջ երկար տարիներ գործած էին

բարեգործական — ազգային բեղուն կեանքին իբրեւ ճբացառիկ մտաւորական, անկաշառ ազգային, գրչի ու խօսքի վարպետ, որ դար մը ապրեցաւ և անոր կրեք քառորդը իր ազգին նուիրեց»:

Այնուհետև յուզարկաւորներու ինքնաշարժերուն թափօրը ուղղուեցաւ Սիտըր Կրով գերեզմանատունը, ուր Եղիշէ Վրդ.ի կողմէ կատարուած կարճ արարողութենէն ետք, դամբանականներ խօսեցան Հ. Բ. Ը. Միութեան Ընդհ. Տնօրէն Պր. Գ. Կիրակոսեան՝ յանուն Հ. Բ. Ը. Միութեան և «Պայքար» օրաթերթի խմբագիր Տօքթ. Ն. Պէրպէրեան՝ յանուն Ռամկավար Ազատական Կուսակցութեան:

Թաղումէն ետք, սգակիրներ հաւաքուեցան հանգուցեալին բնակարանը իրենց ցաւակցութիւնները յայտնելու հանգուցեալի դուստրերուն և թոռներուն, ինչպէս նաև մասնակցելու հոգեճաշին:

Մ. Վրդ. Ինդոյեանը, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան դիւանապետ Տ. Շահէ Վրդ. Աճեմեան, ինչպէս նաև Տէր Վարդան և Տէր Կարէն Վինյ. հայրերն ու Եպիսկոպոսական Եկեղեցւոյ հովիւներէն Տ. Պրիմընըր Առաջնորդ Սրբազան Հայրը դամբանականով անդրադարձաւ մեծանուն հանգուցեալին կրթական — քրական —

Ն Ո Ր Ը Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն Ն Ե Ր



Այս տարի՝ փայլուն յաջողութեամբ մայրաքաղաքիս Բժշկական Համալսարանը աւարտեցին Ն. Բ. Ը. Միութեան երիտասարդ սերունդի ներկայացուցիչներէն՝ Տոքթ. Ժան Գեղամ Հայրապետեան եւ Տոքթ. Յակոբ Տիգրանեան, որոնք վկայուած են որպէս Բժիշկ-Վիրաբոյժ:

«Տեղեկատու» ն կը յայտնէ իր սրտագին ուրախութիւնը այս առիթով եւ կը ներկայացնէ ջերմագին շնորհաւորութիւններ:

ՏՈՔԹ. ԺԱՆ ԳԵՂԱՄ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ՏՈՔԹ. ԹԱԿՈՐ ՏԻԳՐԱՆԵԱՆ

և կամ անոր ազգայակալանման և այլ ձեռնարկներուն յաջողութեան մէջ՝ իրենց բաժինը բերած: Ժողովը բոլոր հանգուցեալներուն յիշատակը յարգեց յտանկայս:

Ապա նախագահը Տոքթ. Անդրանիկ Մանուկեանը հրաւիրեց, որ Ատենադպիրի պաշտօնը ստանձնէ և նշանակեց Ընտրական, Քուէախոյզ և Ուղերձներու Յանձնախումբերը:

Ընդհ. Տնօրէն Պր. Գ. Կիրակոսեան ներկայացուց Ընդհ. Ժողովի Հրաւիրագիրը, յայտնելով որ անիկա իր ատենին զրկուած է Միութեան բոլոր շրջանակներուն և լոյս տեսած է 23 թերթերու մէջ, Ամերիկա թէ արտասահման: Ժողովը տեղեկացաւ նաեւ թէ 2062 Փոխանորդագիրներ ստացուած էին՝ 2377 քուէի ձայնով:

Ատենական գործողութիւններու աւարտումէն ետք, նախագահը կարգաց բացման բովանդակալից ճառ մը: Նախ անդրադարձաւ Միութեան Կեդր. Վարչութիւնը լրջօրէն զբաղեցնող մէկ քանի հարցերու: Յայտնեց թէ՛ վերջին պատերազմէն առաջ՝ Բարեգործականի կազմակերպական կեանքը երկար տարիներէ ի վեր հաստատ ձեւ մը առած էր և վերին Կեդրոնէն անոր ղեկավարութիւնը արտաքին դժուարութեանց չէր հանդիպեր: Պատերազմէն յետոյ, սա-

կայն, իրենց ազատութիւնը նոր ձեռք բերած կարգ մը երկիրներ օտար ընկերակցութեանց գործունէութիւնը օրինական սեղմումներու ենթարկեցին: Տեղական կանոնադրութիւններով գոհացում տրւելինք, ըստ, իշխանութեանց և մեր ազգայակալանման ձեռնարկները բնականոն կերպով կը շարունակենք: Սակայն հարկ տեսնուեցաւ որ Միութեան Հիմնական Կանոնագրին մէջ որոշ բարեփոխումներ ընենք, որպէսզի Բարեգործականի միասնականութիւնն ու կեդրոնացած ղեկավարութիւնը անեղծ պահուին: Այդ փոփոխութիւնները ուսումնասիրելու համար, Կեդր. Վարչութիւնը տարիէ մը ի վեր խորհրդակցութիւններ կ'ունենայ Եւրոպայի, Ամերիկայի և Մերձաւոր Արեւելքի իր շրջանակներուն հետ:

Երկրորդ կարեւոր խնդիրն է, աւելցուց Պր. Մանուկեան, Հ.Բ.Ը. Միութեան գործին սասցած ծաւալը և զայն դիմագրաւելու համար իր նիւթական միջոցներուն անբաւարարութիւնը: Հ.Բ.Ը. Միութիւնը այժմ ունի 12 սեփական վարժարաններ՝ որոնց չորսը երկրորդական կրթութեան յատուկ, կ'օգնէ 75ի մօտ ազգային և յարանուանական դպրոցներու, կը պահէ նաեւ 100 համալսարանական սաներ, և միայն իր կրթ-

Թական գործին համար կը ծախսէ 486,000 տոլար, որուն վրայ բարդելով իր մշակութային և խնամատարական ձեռնարկներուն ծախքերը, ազգապահպանման նպատակներու համար 1960 ին տրամադրած է 593,000 տոլար: Մեր ներկայ ընդարձակ ձեռնարկներուն մատակարարումը կարենալ շարունակելու համար, յայտարարեց Նախագահը, մէկ միջոց կայ միայն — աւելցնել Միութեան հասոյթները, և այս առթիւ երկարօրէն ցոյց տուաւ թէ ի՞նչ գործնական քայլեր պէտք է առնուին, մասնաւորապէս Միութեան արտասահմանի մարմիններուն կողմէ:

Բարեգործականի 1960 ի ընթացքին ունեցած ընդարձակ ձեռնարկներուն և անոնց համար ծախսուած գումարներուն մասին ամփոփ տեղեկութիւններ տալէ վերջ, Նախագահը իր ուղերձը փակեց անդրադարձումով մը՝ հայ եկեղեցւոյ ներկայ վիճակին մասին:

Գոհունակութիւն յայտնեց որ մեր երկու նուիրակետական Աթոռները, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնները, ներկայիս կը գտնուին բնականոն վիճակի մէջ, վերջ գտած է առաջինին երկար ու տխուր տագնապը և երկրորդին կեանքը ընդհատում չէ ունեցած: Ազգին համար կենսական է, որ պատրիարքական իշխանութիւններ պահուին և շարունակուին և անոնց գլուխը գտնուողները ծառայեն իրենց բարձր կոչումին:

Ակնարկելով Ս. Էջմիածնի և Անթիլիասի միջեւ շարունակուող վէճին, անբուս թէ «որքան երջանիկ պիտի ըլլայինք, եթէ մօտ վեց տարիէ ի վեր բացուած այդ խրամաւոր եւս փակուած ըլլար: Արուեստական այդ վէճը գոյութեան իրաւունք չունի և Միութիւնը սրտագին կը ցանկայ որ խաղաղութիւնն ու եղբայրական սիրոյ հաղորդութիւնը վերահաստատուին Ամենայն Հայոց Հայրապետութեան և Անթիլիասի Կաթողիկոսութեան միջեւ:»

Ընդհ. Տնօրէն Պր. Գ. Կիրակոսեան ներկայացուց Միութեան 1960 ի Ընդհանուր Տեղեկագիրը, անկէ մասնաւորաբար կարդալով Կեդր. Վարչութեան վերաբերեալ գլուխը և ամփոփ տեղեկութիւններ տալով միւս գլուխներուն մասին: Առանձնապէս

անդրադարձաւ Հիմնական Կանոնագրի բարեփոխման կապակցութեամբ Փարիզի մէջ 1960 ի Հօկտեմբերին գումարուած Միջ-Շըրջանակային խորհրդակցական ժողովին, և կարգաց հոն որդեգրուած բանաձեւը՝ որով նախատեսուեցին եղած են Բարեգործականի համահայկականութիւնը և միասնականութիւնը պահպանելու համար: Կտակներ և Նուիրատուութիւններ գլուխին ընթերցումով, միասնի յիշեց պատուական բարերարներու կողմէ 1960 ին ի նպաստ Միութեան կատարուած զոհաբերութիւնները, որոնց գումարը եղած է 170,516 տոլար:

Ողջամտ կերպով պատրաստուած այս տեղեկագիրը, որ յատկօրէն կը պատկերացնէր կազմակերպութեան ամբողջ տարուան մը գործունէութիւնը, կը բաղկանար 76 էջերէ և անոր հայերէն ու անգլիերէն օրինակները բաժնուած էին ժողովականներուն:

Ապա Հաշուապետ Պր. Ս. Արտունի ներկայացուց Հ.Բ.Ը. Միութեան 1960 տարեշրջանի հաշուական ընդարձակ Տեղեկագիրը, 34 էջերէ բաղկացած: Ժողովականները ի ձեռին ունէին անոր ամփոփումը, որմէ կը տեսնուէր թէ նոյն տարեշրջանին Միութեան ընդհանուր գոյքը եղած է 10, 589,543 տոլար և իր 733 986 տոլարի մուտքէն 593,208 տոլարը յատկացուած է ազգապահպանման գործին: Կեդր. Վարչ. Գանձապահ Պր. Չարլզ Գարակէօզեան՝ համառօտ այլ շահեկան զեկոյցով մը Միութեան արժեթուղթերուն տոմարական և սակարանի գինները ներկայացուց, և ժողովը գոհունակութեամբ տեսաւ թէ արժեթուղթերը մատակարարուած էին զգալապէս շահարեք եղանակով:

Հաշուեքննիչ Յանձնախումբին կողմէ Պր. Ե. Թուրքեան իր տեղեկագրով հաստատեց թէ Յանձնախումբը Միութեան տոմարները քննած և հաշիւները ճիշդ ու կանոնաւոր գտած էր:

Գաղտնի քուէարկութեամբ, յառաջիկայ տարուան համար նոյն Յանձնախումբին անդամ ընտրուեցան Պր. Պետրոս Թէրզեան, Պր. Բիշըրա Կրէկըրի և Պր. Թէֆթ Մարտիրոսեան:

Կէսօրուան ճաշի դադարէն ետք, ժամը 2.30 ին ժողովը վերսկսաւ իր աշխատանքը:

ներուէն և առաջին առիթով գոհունակութեամբ վաւերացուց Ընդհանուր և Հաշուական Տեղեկագիրները:

Նախագահին հրաւէրով, Լիբանանի Երջանակի Պատուիրակ Տոքթ. Մանուկեան անգլիերէն լեզուով ըրաւ կարճ բայց իմաստալից ուղերձ մը: Ան ըսաւ, թէ տեսնելով Բարեգործականի բարձրագոյն Կեդրոնին մէջ հայ հոգիով և զգացումով լի ամերիկահայ առաջնորդները, խորապէս տպաւորուած է ժողովէն: Յետոյ արագ ակնարկով մը ներկայացուց Միութեան Լիբանանի սեփական վարժարաններուն այսօրուան նախանձելի վիճակը և մաղթեց որ նոյն պատկերը պարզուի Միութեան այլ և այլ մարզերու գործունէութեանց մէջ:

Միութեան հասոյթները աւելցնելով անոր ազգապահպանման գործը կարենալ անխափան շարունակելու համար, առաջարկուեցաւ որ ամէն տարի հանգանակութիւն մը կատարուի: Առաջարկը ընդունուեցաւ և ժողովը նպատակակէտ որոշեց 150,000 տոլար, որուն 100,000 տոլարը պիտի հաւաքուի Ամերիկայէն, իսկ մնացեալ 50,000 տոլարը արտասահմանէն: Այս արշաւը պիտի կատարուի՝ ամէն վայրի մէջ տեղական պայմաններու ընձեռած լաւագոյն ձեւերով:

Կեդր. Վարչութեան մէջ իրենց պաշտօնավարութեան եռամեայ շրջանը աւարտած անդամներու տեղ մասնակի ընտրութիւն կատարուելով, գաղտնի քուէարկութեամբ վերընտրուեցան Պր. Յարութիւն Յ. Թուրուքեան, Հայկ Գավուքճեան, Տիկ. Մ. Յովսէփեան, և Վեր. Ա. Պետիկեան: Տիար Ե. Կիւլպէնկեան վերընտրութեան համար իր թեկնածութիւնը դրած չըլլալով, Կեդր. Վարչ. Ժողովի անդամ ընտրուեցաւ Զօր. Սարգիս Զարդարեան:

Նախագահը գնահատական խօսքերով ներկայացուց օրուան հիւրերը, որոնք աւուր պատշաճի արտայայտութիւններ ունեցան:

Տոքթ. Ա. Պիւլիւքեան ըսաւ թէ միջազգային կացութեան պատճառով հարկ տեսնուած է որ Միութեան իրաւական անձնաւորութիւնը յարմարեցուի զանազան երկիրներու տեղական պայմաններուն և ատոր համար է որ Կեդր. Վարչութիւնը կ'աշխատի կանոնադրական փոփոխութիւններ կա-

տարել, և իրեն ու ընկերներուն ցոյց տրուած սիրալիր ընդունելութեան համար շնորհակալութիւն յայտնելէ ետք, յաջողութեան մաղթանքներ բրաւ Միութեան ձեռնարկներուն համար: Պր. Հ. Թօփաքեան գոհունակութեամբ անդրադարձաւ Պր. Մանուկեանի մէջ վերջին երկու տարիներու ընթացքին Միութեան կատարած եռանդուն գործունէութեանց: Իսկ բարերար Պ. Ե. Հիւսիսեան, Միւսնի Մասնաճիւղին՝ ինչպէս նաեւ տեղւոյն հայ փոքր գաղութին մասին կարգ մը տեղեկութիւններ հաղորդեց, և ուրախութիւն յայտնեց որ Ամերիկայի մէջ Միութիւնը կենսունակ վիճակի մը մէջ կը գտնուի և անոր ղեկավարները նուիրումով ու գիտակցութեամբ կը վարեն իրենց վստահուած գործերը:

Նախագահը հաղորդեց թէ ընթացիկ տարուան միջոցին, արտասահման գտնուող Պր. Նուրհան Քնաճեանի տեղ, Կեդրոնական Վարչութիւնը իր կազմին վրայ աւելցուցած է նոր անդամ մը, յանձին Պր. Զարիք Աճէմեանի, որ Զէյս Մէնհէթըն Պէնքի մէջ բարձր պաշտօնատար մըն է, և յոյս յայտնեց որ ան իր ելեւմտագէտի խորհուրդներով և փորձառութեամբ մեծապէս օգտակար պիտի ըլլայ Միութեան: Ըստ կանոնագրի, Ընդհ. Ժողովին կը մնար ընդունիլ կամ մերժել Վարչութեան կողմէ եղած այս անուանումը, և ժողովը միաձայնութեամբ վաւերացուց զայն:

Միութեան 1960ի գործունէութեան զանազան երեսներուն մասին ժողովականներուն կողմէ կատարուեցան տեսակէտներու, կարծիքներու լայն փոխանակութիւններ, յայտնուեցան նաեւ հայապահպանման նոր ձեռնարկներ ընելու բաղձանքներ և եղան օգտակար թելադրութիւններ, ժողովի աշխատութեանց վերջաւորութեան, Նախագահին հրաւէրով հակիրճ ուղերձ մը ըրաւ Վեր. Ա. Պետիկեան, շեշտելով Միութեան գաղափարին դերն ու կարեւորութիւնը Բարեգործականի կեանքին մէջ:

48րդ Ընդհ. Ժողովը փակուեցաւ Հոգչ. Տ. Վաչէ Վրդ. Յովսէփեանի աղօթքով, երեկոյեան ժամը 6ին:

Մ. Բ.

Գանիբէի ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳ՝ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ օրկան

«Տեղեկասու» ն կը հրատարակուի ամիսը անգամ մը.

- Թղթակցութեանց, դրամական նուէրներու, գիրքերու, թերթերու և հանդէսներու առաքումները կատարել խմբագրութեանս հասցէին՝

Խմբագրութիւն «Տեղեկասու»ի

15, Էմատ էլ Տին փողոց

Նամակատուի 717, Գահիրէ — Հեռախօս 55636

Rédaction «Déghégaou»

15, Rue Emad El Dine

B.P. 717, — Le Caire — R. A. U.

«Տեղեկասու»ի Խմբագրական Մարմին

Ժամկոչեան Հայկ

Շալեան Սիսակ

Պասմանեան Գրիգոր

Այս հրատարակութիւնը վճարովի չէ
Շնորհակալութեամբ կ'ընդունինք նուէրներ, մեր այս
ձեռնարկը աւելի նոյս եւ օտանեկան ընծայելու համար:

— Ասանալու համար դիմել խմբագրութեանս —

مطبعة ساهاج مسروب ٢٥ شارع عرابي بالقاهرة

Printed in Egypt by SAHAG-MESROB PRESS. 25 Sharia Oraby, Caire, U.A.R.